Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 14 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Պյոտր Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի գրադարանի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզի ջեռուցում» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ազատամուտ ավանի տարական դպրոցի խաղասենյակի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մկրտականին կից մեկ հարկանի շինությունների վերակառուցման առաջին փուլ» և «Ռուբեն Սևակի թանգարանի կազմակերպում» ծրագրերը.

«Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական օգնության տրամադրում» ծրագիրը.

ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արցախ» պետական համալսարանի հանրակացարանի երկու հարկի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցին հարող տարածքում մարզադաշտի կառուցում» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լորուտ գյուղի եռահարկ ուսումնական մասնաշենքի տանիքի վերանորոգում և ցանկապատում» ծրագրերը.

«Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվա կաններին իրականացվող «Մայրատուն» բարեգործական ծրագիրը.

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից 2012-2016 թվականների ընթացքում իրականացվող ծրագիրը.

«Հանուն բարության» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է կազմակերպել զոհված ազատամարտիկների, սոցիալապես անապահով բազմազավակ և հաշմանդամ, միայնակ թոշակառու, կարիքավոր թվով 640 ընտանիքներին նյութական աջակցությունը, որը կնպաստի աղքատության նվազեցմանը.

«Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագիրը, որի նպատակն է աջակցություն ցուցաբերել կազմակերպությունում գրանցված սոցիալապես անապահով ընտանիքներին, զոհված ազատամարտիկների և բազմազավակ ընտանիքներին, ինչպես նաև կազմակերպել ամառային ճամբար 7-16 տարեկան երեխաների համար.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գետահովիտ, Կոթի և Ոսկևան համայնքների մանկապարտեզների համար կահույքի ձեռքբերում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: